Ապատեղեկատվական հայտարարություններ Արևելյան գործընկերության մասին

2009 թվականին մեկնարկած Արևելյան գործընկերության (ԱԳ) նպատակն է խորացնել և ամրապնդել հարաբերությունները Եվրամիության (ԵՄ), նրա անդամ պետությունների և նրա արևելյան վեց հարևանների միջև՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա:

Արևելյան գործընկերությունը և նրա անդամ պետությունները ապատեղեկատվական քարոզարշավների թիրախ են դառնում, որոնք քաղաքացիներին զրկում են այս նախաձեռնության և դրա առավելությունների մասին հստակ և հավաստի տեղեկատվությունից: Առավել տարածված ապատեղեկատվական հայտարարությունները վախ են տարածում և փորձում են Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիներին համոզել, որ իրենց որոշումներում իրենք ընտրության հնարավորություն չունեն:

ՄԻ՛ ԽԱԲՎԵՔ: ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ:

Արևելյան գործընկերության վերաբերյալ առավել տարածված ապատեղեկատվական հայտարարությունները հետևյալն են:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերությունը պարտադրվում է գործընկերներին իրենց կամքին հակառակ

ՀԵՐՔՈՒՄ

Արևելյան գործընկերությունը Եվրոպական միության, նրա անդամ պետությունների և գործընկեր երկրների համատեղ նախաձեռնությունն է: Գործընկեր երկրները կարող են ընտրություն կատարել իրենց ներգրավվածության մակարդակի և նպատակների վերաբերյալ: Գործընկեր երկրները նախընտրում են համապատասխանել ԵՄ չափորոշիչներին: Դա իրականացվում է, օրինակ՝ թափանցիկ և հաշվետու կառավարման կառույցների ներդրման և ոլորտի չափանիշների հետ համապատասխանեցման միջոցով՝ ԱԳ երկրների և ԵՄ-ի միջև առևտրային հնարավորություններից օգտվելու նպատակով:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերությունն ստեղծվել է ԵՄ-ի կողմից՝ իր գործընկերներին վերահսկելու համար

ՀԵՐՔՈՒՄ

Արևելյան գործընկերությունը համատեղ նախաձեռնություն է, որի նպատակն է ամրապնդել հարաբերությունները Եվրամիության անդամ երկրների և նրա արևելյան հարևանների միջև: «Արևելյան գործընկերություն» նախաձեռնությունը հարթակ է տարածաշրջանի երկրների համար՝ ցանկության դեպքում ԵՄ-ի հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու համար: Արևելյան գործընկերության նպատակն է կառուցել բարիդրացիական հարաբերություններ, որտեղ հաշվի են առնվում յուրաքանչյուր գործընկեր երկրի անհատական ակնկալիքներն ու նպատակները: Բարեփոխումների իրականացումը և ընդհանուր հիմնարար արժեքների նկատմամբ հարգանքն ընկած են Արևելյան գործընկերության հիմքում: Դրանք ներառում են՝ աջակցություն ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին, օրենքի գերակայության ոլորտի բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, գենդերային խնդիրներին, ինչպես նաև աջակցություն քաղաքացիական հասարակությանը և անկախ լրատվամիջոցներին:

#StrongerTogether
www.euvsdisinfo.eu

Դեկտեմբեր 2021թ.

Ապատեղեկատվական հայտարարություններ Արևելյան գործընկերության մասին

EU vs DiSiNFO

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անդամակցությունը Արևելյան գործընկերությանը վտանգում է ավանդական արժեքներն ու ազգային ինքնությունը

ՀԵՐՔՈՒՄ

Արևելյան գործընկերությունը ռազմավարական և տարբեր նպատակների իրականացմանը միտված գործընկերություն է, որը հիմնված է ընդհանուր արժեքների և կանոնների, փոխադարձ շահերի և պարտավորությունների, ինչպես նաև ընդհանուր սեփականության և պատասխանատվության վրա: Բարեփոխումների օրակարգի շարունակական իրականացումը, հիմնարար և ընդհանուր արժեքների նկատմամբ հարգանքը հանդիսանում են և կշարունակեն հանդիսանալ մեր գործընկերության հիմքը: Արևելյան գործընկերությունը նպատակաուղղված է գործընկեր երկրների քաղաքական ասոցացմանը և տնտեսական ինտեգրմանը: Այն ուղղված չէ որևէ երկրի ազգային ինքնության դեմ: ԵՄ-ն կարևորում է մշակույթի առանցքային դերը՝ նպաստելու բաց հարաբերությունների և միջմշակութային երկխոսության հաստատմանը՝ հանուն խաղաղ միջհամայնքային հարաբերությունների: ԵՄ-ն աջակցում է երիտասարդության և քաղաքացիական հասարակության մասնակցությանը ժողովրդավարական գործընթացներին և լսելի դարձնում նրանց ձայնը:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերությունն ապակայունացնելու և հեղափոխություն հրահրելու գործիք է

ՀԵՐՔՈՒՄ

Արևելյան գործընկերության օրակարգը միտված է դրական փոփոխությունների իրականացմանը Եվրամիության և Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիների կյանքում: Այդ նպատակին հասնելու հիմնական ուղիներից մեկը ժողովրդավարական կանոնների և սկզբունքների խրախուսումն է, ընդհանուր հիմնարար արժեքների նկատմամբ հարգանքը և բարեփոխումներին ուղղված ներդրումներ կատարելը: Դրանք ներառում են՝ աջակցություն օրենքի գերակայության ոլորտի բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, գենդերային խնդիրներին, ինչպես նաև աջակցություն քաղաքացիական հասարակությանը և անկախ լրատվամիջոցներին: ԵՄ-ն չի պարտադրում որևէ գործողություն կամ ծրագիր իր գործընկեր երկրներին: Համագործակցության ընդհանուր նպատակն է ստեղծել համատեղ ժողովրդավարության, բարգավաճման և կայունության համընդհանուր տարածք՝ յուրաքանչյուր առանձին երկրի նպատակներին համապատասխան:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերության երկրները հարկադրված են գնել արևմտյան արտադրության պատվաստանյութեր, և նրանց արգելվում է գնել ռուսական պատվաստանյութեր

ՀԵՐՔՈՒՄ

ԱԼԳ երկրներն ազատ են գնելու ցանկացած պատվաստանյութ: Նրանցից հինգը մասնակցում են COVAX ծրագրին և պատվաստանյութեր են ստացել անմիջապես ԵՄ անդամ երկրներից կամ COVAX-ի միջոցով: Ավելին, ԱԼԳ-ն պայքարում է COVID-19 համավարակի դեմ հատուկ նախատեսված աջակցության ծրագրերի միջոցով՝ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համատեղ և ԵՄ անդամ պետությունների հետ համագործակցությամբ՝ Team Europe (Թիմ Եվրոպա) նախաձեռնության ներքո:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերությունը հակառուսական նախագիծ է

ՀԵՐՔՈՒՄ

Արևելյան գործընկերությունն ուղղված չէ որևէ երկրի դեմ. այն կառուցողական հարթակ է տարածաշրջանի երկրների համար, ցանկության դեպքում, ԵՄ-ի հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու համար: ԵՄ-ն չի միջամտում որևէ երկրի արտաքին քաղաքականության որոշումներին և իր գործընկերներից որևէ մեկից չի պահանջում ընտրություն կատարել ԵՄ-ի և որևէ այլ երկրի միջև:

#StrongerTogether
www.euvsdisinfo.eu

EaP Eastern Partnership

Դեկտեմբեր 2021թ.